Ուրբաթ, 18 հունիսի, 2010 թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 10 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության Կապան քաղաքի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի մասնաշենքի հիմնանորոգման, Տավուշի մարզի Ազատամուտ գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի բնակելի շենքերի տանիքների վերանորոգման և Երևան քաղաքի Խանջյան փողոցի վերգետնյա հետիոտն անցումի կառուցման ծրագրերը:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող Վեհարանի հանդիսությունների դահլիճի կառուցման ծրագիրը:

«ՍՈՍ – մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր համայնքներում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում», «Աջակցություն Կոտայք, Նոր-Գյուղ, Իջևանի թիվ 5, Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքների թիվ 84 և 103 հանրակրթական դպրոցներին», «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն», «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագրերը:

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաեւ նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: